ՎԱՀՐԱՄՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՆՂՈԼՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

XII դ. վերջին—XIII դ. սկզբին իրենց հայ Բագրատունիների ժառանգորդը համարող վրաց Բագրատունիների օգնությամբ Զաքարյան իշխանական տանը հաջողվեց սելջուկյան լծից ազատագրել հյուսիսային Հայաստանի մեծ մասը և ստեղծել ավատատիրական ենթակարգության սկզբունքով վրացական թագավորության կազմի մեջ մտնող հզոր իշխանապետություն։ Դրա տարածքում ձևավորվեցին մի շարք իշխանություններ, որոնցից մեկին տիրում էին Զաքարյան ավատական տան կրտսեր ճյուղը ներկայացնող Վահրամյանները[1]։ Խնդրո առարկա իշխանությունը ձգվում էր Գագ բերդից (Նոյեմբերյանի շրջանում) ներառյալ Շամքոր և Կուրից մինչև Սևանա լեռներ, ընդգրկելով պատմական Հայաստանի Կողբոփոր, Տավուշ, Գարդման, Շակաշեն և Գառիսոս գավառների տարածքի նշանակալի մասը՝ Գագ, Քավաղին, Երզևանք, Տավուշ, Կածարեթ, Տերունական, Սագամ, Քարհերձ ու Գարդման բերդերով և Շամքոր քաղաքով հանդերձ։ Եթե մինչ 1220-ական թթ. քննվող իշխանությունը տնտեսական, քաղաքական և տարածքային զարգացում էր ապրում, ապա մոնղոլների հետախուզական արշավանքներից (1220—1222) և խորեզմշահ Ջալալ էդ-Դինի նվաճումներից (1225—1231) հետո բռնեց թուլացման ուղին։ Սկսել էր թուլանալ նաև դեռ XIII դ. առաջին քսանամյակում պետական ուժեղ կազմավորում համարվող վրացական թագավորությունը։ Այս հանգամանքը բացատրվում է ոչ միայն մոնղոլների հետախուզական արշավանքների ու Ջալալ էդ-Դինի հրոսակախմբերի նվաճումների ընթացքում երկրին (հատկապես նրա արևելյան ու հարավային շրջաններին) հասցված ծանր հարվածներով, այլև պետության ավատական վերնախավի ներսում առկա տարաբնույթ հակասություններով։ Դրանք գոյություն ունեին նաև երկրի պատմության նախորդ փուլում, սակայն, արտաքին հաջողություններով պայմանավորված, անհամեմատ թույլ էին արտահայտվում։ Այժմ արդեն շարունակվող անհաջողությունների հետևանքով ավատական ավագանու շահերի նույնիսկ ընդհանրությունը վերաճել էր իր հակասությանը, վտանգելով պետության ոչ միայն անվտանգությունը, այլև տարածքային ամբողջականությունը։ Ընդ որում, պետության թուլացումը և նրա ներսում հակասությունների սրումը փոխպայմանավորված և շարունակ խորացող երևույթներ էին։ Այդ իրողությունն այնքան ակնառու էր, որ դրա արձանագրումից խուսափել չի կարողացել անգամ քրիստոնեական վարդապետությամբ սնված վրաց ժամանակագիրը, սրտի ցավով երկրի անհաջողությունների պատճառները փնտրելով ավատատերերի անմիաբանության և միմյանց հակադրվելու մեջ[2]։

Մինդորի ճակատամարտից հետո (1229)[3] Վրաստանում կենտրոնական ուժեղ իշխանությունն ըստ էության դադարեց որպես այդպիսին գոյություն

---

1 Վահրամյանների իշխանության նախընթաց պատմության քննությունը տե՛ս Արտաշես Շահնազարյան, Վահրամյանների իշխանության պատմությունից (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1974, № 4, էջ 104—113), նույնի՝ Վահրամյանների իշխանությունը մոնղոլների հետախուզական արշավանքների և Ջալալ էդ-Դինի նվաճումների ժամանակ (նույն տեղում, 1980, № 6, էջ 50—63)։

2 «Վրաց ժամանակագրություն (1207—1318)», թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները Պարույր Մուրադյանի, Երևան, 1971, էջ 74։

3 Հ. Գ. Մարգարյան, Ջալալ ադ-Դինի Հայաստան և Վրաստան կատարած արշավանքների պատմության շուրջ («Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 4, էջ 133)։ Իր այս շա-

ունենալ։ Բանն այն է, որ Վրաստանը վերջնականապես երկրորդական պետությունների շարքը դասած այդ ճակատամարտի սկզբում, որին մասնակցում էր նաև Վահրամ Գագեցին իր զորքով, Ջալալ էդ-Դինին հաջողվեց իր կողմը գրավել հայ-վրացական բանակի կազմում գտնվող 20-հազարանոց ղփչաղական զորաբանակը[4], որը հրաժարվեց կռվել խորեզմշահի դեմ և դրանով իսկ ճակատամարտի ելքը վճռեց հօգուտ վերջինիս։ Նախադեպը չունեցող այս միջադեպը կենտրոնական իշխանության համար զգալի հարված էր, քանի որ ղփչաղական զինական ուժն այն գլխավոր նեցուկն էր, որի վրա էր վրացական արքունիքը հիմնականում հենվում ավատական կենտրոնախույս ուժերի և արտաքին թշնամիների դեմ պայքարելիս։ Կենտրոնական իշխանության վիճակն ավելի էր բարդանում նրանով, որ պահակալ Ռուսուդան թագուհին (1222—1245) ոչ միայն զուրկ էր մոր կառավարչական ունակություններից և երկրի կառավարումը հանձնել էր Զաքարյան ավատական տան ներկայացուցիչներին («վարէր զիշխանութիւն թագաւորութեանն ի ձեռն զօրագլխացն Իւանէի, և որդւոյ իւրոյ Աւագին, և Շահնշահի՝ որդւոյ Զաքարէի, և Վահրամայ և այլոցն»)[5], այլև պետության հեղինակությանը մեծապես վնասող և թագակրին ոչ վայել վարքուբարքով[6] ու զուտ նեղ անձնական շահերով թելադրվող ներքին քաղաքականությամբ հարուցել էր երկրի ավատական աղդեցիկ շրջանների դժգոհությունը։ Վերջինս ավելի խորացավ, երբ Ռուսուդանն օրինական թագաժառանգի՝ Գեորգի Լաշայի որդի Դավիթի փոխարեն ոչ միայն 1236 թ. Քութայիսում թագադրեց իր անչափահաս տղային, այլև փորձում էր կյանքից զրկել եղբորորդուն, որին աքսորել էր Կեսարիա, իր փեսայի՝ սուլթան Ղիա-

---

հեկան հոդվածում Հ. Մարգարյանը նկատել է, որ կովկասագիտական դրականության մեջ Անդրկովկասում Ջալալ էդ-Դինի գործունեության «ուսումնասիրությունը կատարվել է հիմնականում տեղական՝ հայկական և վրացական աղբյուրների հիման վրա և այդ պատճառով էլ հարցերի որոշակի՝ սկզբնաղբյուրների ընձեռած նյութով սահմանափակված շրջանակ է ընդգրկել» (էջ 125)։ Նա այդ եզանակով կատարված ուսումնասիրություն է դիտել նաև տողերիս հեղինակի «Վահրամյանների իշխանությունը մոնղոլների հետախուզական արշավանքների և Ջալալ էդ-Դինի նվաճումների ժամանակ (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1980, № 6, էջ 50—63) հոդվածը։ Իրականում այդ հոդվածում Ջալալ էդ-Դինի և Վահրամյանների փոխհարաբերությունները քննելիս մենք շրջանառության մեջ ենք դրել հարցի հետազոտմանը նպաստ բերող բոլոր օտար աղբյուրները (թվով հինգ)։ Ավելին, աղբյուրագիտական թռուցիկ քննությամբ ոչ միայն կռահել ենք Իբն Խալդունի համար հիմք ծառայած մի այլ օտար սկզբնաղբյուրի գոյությունը, այլև ան-Նասիվիի տեղեկությունների վրա հենվելով պարզել Կ. Գանձակեցու առ այդ մութ մի հաղորդման իմաստը (էջ 62)։ Մեր այդ հոդվածում չենք արտացոլել Հ. Մարգարյանի օգտագործած օտար աղբյուրներից (Իբն ալ-Ասիր, ան-Նասիվի, Ռաշիդ ադ-Դին, ալ-Բաղդադի) միայն վերջինը, քանի որ այն ոչինչ չի հաղորդում մեզ հետաքրքրած հարցի՝ խորեզմշահի և Վահրամյանների փոխհարաբերությունների մասին։ Իսկ ընդհանրապես մենք ևս գտնում ենք, որ կովկասագիտության զարգացման արդի մակարդակը և պահանջները բացառում են այս կամ այն հարցը լոկ տեղական աղբյուրներով սպառիչ և համակողմանի լուսաբանելու հնարավորությունը։

4 «Վրաց ժամանակագրություն», էջ 70, Рашид ад-Дин, Сборник летописей, т. I, кн. II, М.—Л., 1952, с. 28.

5 Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 238, հմմտ. «Մաղաքիա աբեղայի Պատմութիւն վասն ազգին Նեստորաց», ի լույս էած Ք. Պ. (այսուհետև՝ Գրիգոր Ականցի), Ս. Պետերբուրգ, 1870, էջ 5։ Թամարի գահակալության վերջին տարիներին և Գեորգի Լաշայի ու Ռուսուդանի օրոք վրացական արքունիքում Զաքարյանների գերադաս դիրքն արտացոլում էր այն մեծ տնտեսական ու ռազմաքաղաքական կշիռը, որ ունեին վրացական թագավորության կազմի մեջ մտնող հայկական շրջանները։

6 «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 11, արաբական աղբյուրներ, Բ, Իբն-ալ-Ասիր» (այսուհետև՝ Իբն ալ-Ասիր), թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981, էջ 314, Կիրակոս Գանձակեցի, էջ 238։

թեդդին Քեյ Խոսրովի մոտ[7]։ Ռուսուդանի այս քայլերը հարուցում էին արևելավրացական իշխանների և Զաքարյանների դժգոհությունը, որոնք օրինական թագաժառանգ էին ճանաչում Գեորգի Լաշայի որդուն։ Անգամ վրաց ժամանակագիրը ոչ միայն պարզիպարզ պարսավում է եղբորորդու նկատմամբ թագուհու վարքագիծը, այլև չի կարողանում համոզիչ փաստարկներով արդարացնել Ռուսուդանի որդու թագադրության արարողությանը արևելավրացական իշխանների ու Զաքարյանների բացակայությունը։ Ահա թե ինչ է գրում նա. «Այսկողմյան թագավորությունը չէր մասնակցում [օծմանը] խորեզմցիների [պատճառով], քանի որ մանդատուրթ-ուխուցես Շանշեն (Շահնշահը—Ա. Շ.) Անիում էր, իսկ ամիրսպասալար Ավազը՝ Բշնիում, իսկ Վահրամ Գագեցին, հերացիք, կախեցիք, սոմխիթարցիք, քարթլցիք, թորեցիք, շավշեցիք, կղարջեցիք, տայեցիք՝ բոլորն էլ իրենց ամրոցներում էին պատսպարվել, յուրաքանչյուրը հնազանդ Ռուսուդանի թագավորությանը և զբաղվածության պատճառով չկարողացան մասնակցել Դավիթ թագավորի (Ռուսուդանի որդու—Ա. Շ.) հանդիսությանը»[8]։ Եթե նշված իշխաններն իրոք հնազանդ լինեին թագուհուն, ապա վրաց ժամանակագիրը հազիվ թե զգար այդ հանգամանքը շեշտելու կարիքը։

Ջալալ էդ-Դինի անփառունակ կործանումից հետո (1231) վրացական թագավորությունն առժամանակ խաղաղ դադար ապրեց, սակայն երկրի վիճակն այդպես էլ չկայունացավ, իսկ կենտրոնական իշխանությունը գնալով թուլանում էր։ Ինչպես ճիշտ նկատել է Լ. Բաբայանը, «Ավագ, Շահնշահ, Վահրամ Զաքարյանները (նկատի ունի Վահրամ Գագեցուն—Ա. Շ.) անվանապես կրելով բարձրաստիճան տիտղոսներ, 13-րդ դարի 30-ական թվականների սկզբին պարփակվել էին իրենց ֆեոդալական տիրույթներում։ Ամիրսպասալարի, մանդատուրթ-ուխուցեսի, աթաբեկի և մսախուրթ-ուխուցեսի պաշտոնները այդ շրջանում ոչ միայն կորցրել էին իրենց համապետական, համավրացական դերը, այլև նեղ իմաստով անդամ, համահայկական ֆունկցիա չկատարեցին»[9]։ Այս երևույթը ևս պետք է բացատրել վրացական պետությանը համակած միջամատական հակասություններով։ Ավելին, ըստ երևույթին նախանձելի չէին նաև Զաքարյանների փոխհարաբերությունները։ Այլապես ինչով բացատրել այն փաստը, որ աղբյուրները համառորեն լռում են Գառնիի ճակատամարտին Վահրամ Գագեցու և նրա զորքի մասնակցության մասին (գուցե դրա պատճառը Իվանե աթաբեկի դավանական անհանդուրժողականությունն էր)[10] կամ թե այն, որ երբ 1229 թ. խորեզմշահը տառացիորեն ամայացնում էր Վահրամյանների իշխանությունը[11], Իվանեն, Ավազն ու Շահնշահը ոչ մի քայլ չձեռնարկեցին նրան օգնելու համար։

Զաքարյանները, մասնավորապես Իվանե աթաբեկն ու Վահրամ Գագեցին, որոնց տիրույթները կից էին Գանձակի էլթկուզյան աթաբեկությանը, վերջինիս վերացումից հետո չկարողացան շարունակել նրա տարածքի հաշվին

---

7 «Վրաց ժամանակագրություն», էջ 81—86, Կիրակոս Գանձակեցի, էջ 289, «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 420—421։

8 «Վրաց ժամանակագրություն», էջ 68, Պ. Մուրադյանի ճշմամբ Ռուսուդանը որդուն թագադրել է 1236 թ. ոչ շուտ (Պարույր Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977, էջ 155), երբ Վրաստանում խորեզմցիների գոյության մասին խոսք անգամ լինել չէր կարող։ Հետևաբար, վրաց ժամանակագրի բերած փաստարկը լիովին հիմնազուրկ է։ Հմմտ. Հ. Գ. Մարգարյան, նշվ. աշխ., էջ 138—139։

9 Լ. Հ. Բաբայան, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII—XIV դարերում, Երևան, 1964, էջ 198։

10 Գառնիի ճակատամարտի հետ կապված հարցերի համապարփակ քննությունը տե՛ս Հայրապետ Մարգարյան, Գառնիի ճակատամարտի պատմության շուրջ (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1982, № 3, էջ 72—81)։

11 Մանրամասն տե՛ս նույն տեղում, 1980, № 6, էջ 61։

իրենց տիրույթներն ընդարձակելու քաղաքականությունը, քանի որ էլթկուզյանների նախկին հողերն ընդունեցին մոնղոլական գերիշխանությունը[12]։ Այս ասպարեզում որոշ հաջողության հասավ միայն Վահրամ Գագեցին, վերագրավելով Ջալալ էդ-Դինի խլած Շամքորը[13]։

Վրացական պետության աննախանձելի վիճակը չէր կարող հայտնի չլինել 1232 թ. Գանձակի գրավումից հետո նրա հետ անմիջական շփման մեջ մտած մոնղոլներին, որոնց արշավանքներին, որպես կանոն, նախորդում էր մեծաքանչ խնամքով կատարված հետախուզությունը[14]։ 1235 թ. մոնղոլական Ղուրուլթայի որոշման համաձայն հարձակում ձեռնարկելով վրացական թագավորության վրա և վստահ լինելով, որ հակառակորդն ի վիճակի չէ իրենց դեմ ուժեղ բռունցք ստեղծել, Անդրկովկասում գտնվող մոնղոլական զորքերի հրամանատար Ջարմաղանը հրաժարվեց միասնական մարտավարությունից և իր բանակը բաժանեց մի քանի խոշոր ջոկատների, յուրաքանչյուրին տալով այս կամ այն կոնկրետ շրջանի գրավման առաջադրանք[15]։ Լուր ստանալով մոնղոլական ներխուժման մասին, Ռուսուդանն ինչպես Ջալալ էդ-Դինի արշավանքների ժամանակ երկիրը թողեց ճակատագրի քմահաճույքին և կրկին աճապարեց ապաստանել Քութայիսում[16], դրանով իսկ ըստ էության բացասական պատասխան տալով մոնղոլների դեմ պայքար կազմակերպելու խնդրին[17]։ Ջաքարյանները ևս, որոնք, ինչպես միշտ, ստիպված էին թշնամու հարվածն առաջինն իրենց վրա վերցնել, թեկուզ սեփական ուժերը համախմբելու որևէ փորձ չկատարեցին, և մոնղոլներն անարգել ներխուժեցին վրացական պետության սահմանները։

1235/1236 թ. ամռանը[18] Վահրամյանների իշխանության վրա հարձակված մոնղոլական երկու զորաջոկատներին գլխավորում էին Մոլար և Ղատաղա նոյինները[19]։ Ընդ որում, նրանցից վերջինին բաժին էր ընկել միայն Գարդման գավառը համանուն բերդով, ուր մոնղոլների հարձակման ժամանակ գտնվում էին Վահրամ Գագեցին և նրա որդի Աղբուղան։ Նախքան Մուղանի իրենց ձմեռանոցից դուրս գալը, Մոլար նոյինը մոտ 100 հոգիանոց մի ջոկատ է ուղարկում, որը գալիս է և փակում Վահրամյանների իշխանության ծայր

---

12 Իբն ալ-Ասիր, էջ 346, տե՛ս նաև «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 4, էջ 137։

13 Մանրամասն տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1980, № 6, էջ 62։

14 Միքայել վարդապետ Չամչյան, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վենետիկ, 1786, էջ 206։

15 Կիրակոս Գանձակեցի, էջ 237—238, Ստեփանոս Օրբելյան, էջ 403, «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ» (այսուհետև՝ Վարդան Արևելցի), ի Վենետիկ, 1862, էջ 144։ Գերմանացի հետազոտող Բ. Լիմպերը ևս գրում է, որ միասնական մարտավարությունից մոնղոլների խուսափելը բխում էր հակառակորդի՝ իրենց դեմ միասնական բռունցք կազմելու անկարողությունից (Die Mongolen und die christlichen Völker des Kaukasus. Eine Untersuchung zur politischen Geschichte Kaukasiens in 13. und beginnenden 14. Jahrhundert, vorgelegt von Bernhard Limper, Köln, 1980, S. 124).

16 «Վրաց ժամանակագրություն», էջ 73։

17 „საქართველოს ისტორიის ნარკვევები", ტ. III, თბილისი, 1979, გვ. 547.

18 Հայագիտության մեջ նվաճման նպատակով մոնղոլների՝ Հայաստան ներխուժելու թվական է ընդունված 1236-ը, սակայն այս իրադարձությունների մասնակից Վանական վարդապետի ինքնաձեռագիր հիշատակարանը (Մատենադարան, ձեռ. № 4823, թ. 155ա) վկայում է, որ նրանք Վահրամյանների իշխանության սահմաններն են մտել 1235 թ.։

19 Կիրակոս Գանձակեցի, էջ 241, Վարդան Արևելցի, էջ 144, Գրիգոր Ականացի, էջ 7—8։ Վարդան Արևելցին (և նրան հետևելով հետագա բոլոր հետազոտողները) պնդում է, թե Վահրամյանների իշխանությունը բաժին էր ընկել միայն Մոլար նոյինին։ Սակայն Կիրակոս Գանձակեցին նշում է, որ Գարդմանը գրավել է «այլ ոմն գլխաւոր... որում անուն էր Ղատաղա նուին» (էջ 243)։

արևելքում գտնվող Շամքոր քաղաքի մուտքերը։ Այդ քաղաքն ուներ ստրատեգիական ու առևտրատնտեսական խոշոր նշանակություն և դրա գրավումը մեծ կորուստ կլիներ Վահրամյանների համար։ Քաղաքի բնակիչները օգնություն են խնդրում Վահրամից և Աղբուղայից՝ միաժամանակ հայտնելով, թե մոնղոլները «Սակաւք են»[20], Աղբուղան, որը ժառանգել էր հոր խիզախությունը, բայց երիտասարդ լինելով դեռ չուներ Վահրամ Գագեցու փորձն ու իմաստությունը,



տությունը, ցանկանում է շամքորցիներին օգնության շտապել, սակայն հայրը ոչ միայն արգելում է, «այլև ոչ քաղաքացեացն հրամայեաց մարտնչել ընդ նոսա», հայտարարելով, թե մոնղոլները «բազումք են»[21]։ Գրականության մեջ Վահրամ Գագեցու այս տակտիկան ըստ էության որակվել է իբրև վախկոտություն, անգամ դավաճանություն[22]։ Սակայն Վահրամյան բազմատոհմ իշխանին վախկոտության մեջ մեղադրելը հիմնազուրկ է, քանի որ նա արտաքին թշնամիների դեմ պայքարում բազմիցս դրսևորել է իր քաջությունն ու անուրանալի զորավարական ձիրքը[23]։ Նրան դավաճանության մեջ մեղադրելը ևս անհիմն է, որովհետև, ինչպես տեսանք, Քութայիսում ապաստանելով Ռուսուդան թագուհին ըստ էության բացասական պատասխան էր տվել մոնղոլների դեմ պայքարելու խնդրին։ Այնուամենայնիվ ինչով է բացատրվում Վահրամ Գագեցու նման պասիվ տակտիկան։ Արդեն նշվեց, որ մոնղոլական ներխուժ-

20 Նույն տեղում, էջ 242։

21 Նույն տեղում։

22 «История Азербайджана», т. I, Баку, 1958, с. 177—178. «История Грузии», т. I, Тбилиси, 1962, с. 227, 228.

23 Մանրամասն տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1974, № 4, էջ 103—111, 1980, № 6, էջ 50—63։

ման նախօրյակին Վահրամ Գագեցին գտնվում էր իր իշխանության հարավարևելյան ծայրամասում ընկած Գարդման բերդում։ Դա պատահական զուգադիպություն չէ և բացատրվում է մոնղոլներին ավելի մոտիկից հետևելու նրա ձգտմամբ (չմոռանանք, որ իբրև սահմանապահ կուսակալ նա պարտավոր էր իրականացնել թշնամական տարածքի հետախուզությունը)։ Որ Վահրամ Գագեցին սպառիչ տեղեկություններ ուներ մոնղոլների մասին, երևում է նրա այն խոսքից, թե մոնղոլները «բազումք են»։ Հետևաբար, դիմադրությունից խուսափելով, նա ձգտում էր Շամքորը և իր մյուս տիրույթները զերծ պահել ավելորդ ավերածություններից ու զոհերից, առավել ևս, որ նրան չէր կարող հայտնի չլինել 1232 թ. մոնղոլներին դիմադրած Գանձակի և նրա բնակիչների տխուր ճակատագիրը։ Եվ, իսկապես, ինչպես սպասում էր Վահրամ Գագեցին, Շամքորի մուտքերը փակած մոնղոլների թիվը գնալով աճում է։ Շուտով այնտեղ է գալիս Մոլար նոյինը և ձեռնամուխ լինում քաղաքի գրավմանը[24]։ Շամքորցիները թշնամուն կատաղի դիմադրություն են ցույց տալիս։ Մոնղոլները Շամքորի շուրջը փորված խրամատը լցնում են փայտով ու ծղոտով, որպեսզի նրա վրայով թափանցեն քաղաք։ Սակայն շամքորցիներին հաջողվում է գիշերը հրդեհել փայտն ու ծղոտը։ Այս անգամ արդեն Մոլար նոյինը հրամայում է պարսպին հավասար հողապատնեշ պատրաստել։ Մոնղոլները հողապատնեշի վրայով թափանցում են Շամքոր, բնակիչներին անխնա սրի քաշում, քաղաքը կողոպտում և հրդեհում[25]։ Այնուհետև նրանք ձեռնամուխ են լինում Վահրամյանների իշխանության տարածքում գտնվող բերդերի գրավմանը։ Կիրակոս Գանձակեցու վկայությամբ՝ «այնոքիկ, որ առին զՇամքոր, եկին ամենայն աղխիւն իւրեանց ի Տաւուշ, ի Կածարէթ, և ի Նոր բերդն, և ի Գագ, և որ զշուրջ զնոքօք և ի նեղ արկեալ պաշարեցին զնոսա»[26]։ Այս իրադարձությունների մասին Գրիգոր Ականացին գրում է. «առին զառաջինն զՇամքոր... առին զՈւզամ [զՍագամ], զՔարհերձ, զՏերևեն [զՏերունական?] ոմեն զդիկն թագաւորանիստ. զԳարդման, զԵրգևանքն, զՄծնաբերդ, ...զՏաւուշ»[27]։ Վարդան Արևելցին, անդրադառնալով այս դեպքերին, համառոտակի խոսում է (հավատալով իր սննդակցին) մոնղոլների կողմից «հնարիւք» Շամքորը գրավելու մասին և ապա, արձանագրելով նվաճողներից իր բերդերը Վահրամ Գագեցու ետ ստանալու իրողությունը, դրանց թվում նշում է նաև Քավազին ամրոցը[28]։ Ընդ որում, նա ընդգծում է, որ Վահրամյանների իշխանությունում գտնվող «ամրոցս և զգեօղս և զգաղարակս. ամենեքեան տուեալ լինէին ի ձեռս նոցա (մոնղոլների—Ա. Շ.) ի սուղ ժամանակս, անվաստակ և առանց աշխատութեան»[29]։ Կիրակոս Գանձակեցու պատմածից երևում է, որ մոնղոլները Վահրամյանների իշխանությունը գրավել են ամռանը[30]։ Ակադ. Հ. Մանանդյանը նկատել է, որ «Վահրամի երկիրը (Վահրամյանների իշխանությունը—Ա. Շ.) համեմատաբար քիչ էր տուժել, որովհետև նրա բերդերը կամովին անձնատուր էին եղել և տվել էին մոնղոլական զորքերին իրենց անասուններն ու գույքը, ինչ որ սրանք պահանջել էին»[31]։ Այս տողերի համար, անկասկած, հիմք են ծառայել գլխավորապես Կիրակոս Գանձակեցու տեղեկությունները։ Իսկ դրանք արժանահավատ են, որովհետև պատմիչն այդ աղետալի իրադարձությունների ոչ միայն ականջալուրը, այլև ականատեսն էր և իր ուսուցիչ Վանական վարդապետի հետ բաժանել էր մոնղոլական գերության բոլոր սարսափներն ու տառապանքները։ Բանն այն է, որ Ջալալ էդ-Դինի կողմից 1229 թ. Խորանաշատի

24 Կիրակոս Գանձակեցի, էջ 242։

25 Նույն տեղում։

26 Նույն տեղում, էջ 243։

27 Գրիգոր Ականացի, էջ 7։

28 Վարդան Արևելցի, էջ 144—145։

29 Նույն տեղում, էջ 145։

30 Կիրակոս Գանձակեցի, էջ 244։

31 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ, Երևան, 1952, էջ 203։

կողոպուտից ու ավերումից հետո Վանականը, հավաքելով իր աշակերտներին, բնակություն էր հաստատել Տավուշ բերդի մոտ գտնվող մի քարայրում, կառուցել փոքրիկ եկեղեցի և ժողովելով «բազում գրեանս», շարունակում էր իր արդյունաշատ գիտամանկավարժական գործունեությունը[32]։ Երբ մոնղոլները մտնում են Տավուշ գավառ, սարսափահար անպաշտպան բնակչությունը ապաստանում է Վանականի քարայրում։ Տեսնելով, որ իրեն ապավինած ժողովուրդը տառապում է ծարավից ու քաղցից, Վանականը երկու աշակերտի հետ գնում է Մոլար նոյինի մոտ և գթություն հայցում։ Մոնղոլ զորապետը բավարարում է նրա խնդրանքը, չնայած գերում է Վանականին ու նրա սաներին, որոնց թվում և Կիրակոս Գանձակեցուն։ Ուշագրավ է, որ Մոլար նոյինը չիմանալով Վահրամ Գագեցու գտնվելու տեղը, Վանականի միջոցով էր փորձում պարզել, թե որտեղ է նա[33]։ Կիրակոս Գանձակեցին (և ոչ միայն նա) նշում է, որ մոնղոլները համեմատաբար մեղմ էին վարվում առանց դիմադրության իրենց ողորմածությանը հանձնվածների նկատմամբ, բավականանալով միայն ամեն մի քոչվորի համար սովորական կողոպուտով, ինչպես նաև նրանց վրա վերակացուներ կարգելով ու հարկ դնելով[34]։ Դիմադրության որևէ փորձի հանդիպելիս մոնղոլները դիմում էին անխնա կոտորածի, ինչպես օրինակ Գանձակում, Շամքորում, Լոռիում, Անիում և այլուր։ Մոնղոլական նվաճման ժամանակ Վահրամյանների իշխանության համեմատաբար քիչ տուժելու մասին է խոսում և այն փաստը, որ Գագ բերդի բնակիչներն անգամ կողոպտվելուց հետո կարողացան իր ժամանակի համար զգալի գումար (80 դահեկան) հավաքել և փրկագնել Վանականին (Կիրակոս Գանձակեցին գերությունից փախավ նույն օրվա գիշերը)[35]։ Մոնղոլական նվաճման ժամանակ քիչ էր տուժել նաև Վահրամյանների վասալ Նոր Բերդի Կյուրիկյան իշխանությունը, այլապես սակավազոր Վասակ իշխանը դժվար թե կարողանար շարունակել և 1237 թ. ավարտել Նոր Վարագի Աստվածածին եկեղեցու կառուցումը[36]։ Մինչ մոնղոլները նվաճում էին իր տիրույթները, Վահրամ Գագեցին որդու հետ տեղից տեղ էր փախչում և ի վերջո ապաստանեց Քութայիսում[37]։

Մոնղոլական մյուս զորաջոկատներն այդ նույն ժամանակամիջոցում իրագործում էին հյուսիսային Հայաստանի և արևելյան Վրաստանի նվաճումը։ Հասկանալի է, որ իրենց տիրույթներից զրկված կամ դրա սպառնալիքի առաջ կանգնած Զաքարյանները պետք է համապատասխան միջոցների դիմեին՝ դրանք ետ բերելու համար։ Քանի որ ուժով դրան հասնելը բացառվում էր, նրանք որոշեցին իրենց նպատակին հասնել մոնղոլներին հպատակվելով։ Առաջինն այդ քայլին դիմեց հոր մահվանից հետո (1234) Զաքարյան ավատական տան գլուխ կանգնած Իվանեի որդի Ավագը, որը ժառանգել էր նաև վրացական պետության աթաբեկության պաշտոնը։ Նրան այդ քայլին մղեց դրության անելանելիությունը և կամավոր իրենց հնազանդվելու մասին նրան մոնղոլների բազմիցս արած առաջարկները։ Ի վերջո, Սևանի ափին բանակած Զարմաղանի և Ավագի բանակցություններն ավարտվում են նրանով, որ վերջինս իր տիրույթները ետ ստանալու պայմանով համաձայնում է դառնալ մոնղոլների հարկատուն և զորքով մասնակցել նրանց հետագա ռազմական գործողություններին[38]։ Ավագի օրինակին հետևում են սկզբում Շահնշահ Զաքարյանը և ապա Վահրամ Գագեցին, որից հետո, ինչպես նշում է վրաց ժամանակագիրը, «հաշտություն ընդունած՝ նրա (Վահրամ Գագեցու—Ա. Շ.) երկիրը

---

32 Կիրակոս Գանձակեցի, էջ 244։

33 Նույն տեղում, էջ 246։

34 Նույն տեղում, էջ 243։

35 Նույն տեղում, էջ 253, Վարդան Արևելցի, էջ 146, հմմտ. Գրիգոր Ականացի, էջ 7—8։

36 Կարո Ղաֆադարյան, Պատմահնագիտական դիտողություններ Նոր-Բերդի Կյուրիկյան իշխանության մասին («Արմֆանի «Տեղեկագիր», 1940, № 4—5, էջ 167—168)։

37 Վարդան Արևելցի, էջ 144, «Վրաց ժամանակագրություն», էջ 73։

38 Կիրակոս Գանձակեցի, էջ 254—257, «Վրաց ժամանակագրություն, էջ 74—75։

ևս խաղաղվեց»[39]։ Չնայած աղբյուրները ոչինչ չեն հաղորդում, թե իր այս քայլին դիմելիս Ռուսուդանի հետ Քութայիսում գտնվող Վահրամյան իշխանը որքանով է հաշվի նստել թագուհու հետ, պնդելի է, որ նա ստացել էր վերջինիս գոնե լուռ համաձայնությունը։ Զաքարյաններից հետո մոնղոլներին հնազանդվում են նաև մնացած հայ ու արևելավրացական իշխանները[40]։

Տալով վրացական պետության ավագանու ներկայացուցիչների այս քայլերի գնահատականը, Գ. Մայսուրաձեն գրել է. «Ավատական էթիկայի տեսանկյունով այսպիսի վարվելակերպը, ինչ խոսք, պիտի նկատվեր որպես պետական նշանակության դավաճանություն, սակայն այն թագուհու... բարկության կամ բացասական ռեակցիայի տեղիք չտվեց»[41]։ Նման գնահատականը թերևս խիստ է, քանի որ պետական դավաճանություն կարելի է համարել նաև անմիտ դիմադրությամբ երկրին ծանր աղետների առաջ կանգնեցնելը։ Բացի այդ, եթե այս իրադարձությունները գնահատելու լինենք «ավատական էթիկայի տեսանկյունով», ապա դրան առաջին հերթին պետք է հավատարիմ լիներ վրացական արքունիքը և պաշտպաներ իր հպատակներին, մինչդեռ այն, ինչպես ճիշտ նկատել է Ռ. Կիկնաձեն, «չկարողացավ (չփորձեց էլ—Ա. Շ.) իմի բերել ներքին ուժերը՝ մոնղոլներին վտարելու համար»[42]։

Մոնղոլներին հնազանդվելուց հետո երկրի մյուս շրջանների նման Վահրամյանների իշխանությունն առժամանակ խաղաղ դադար ապրեց։ Նվաճումներից անմիջապես հետո մոնղոլները ձեռնամուխ եղան գրավված տարածքների տնտեսական ու քաղաքական յուրացմանը։ Ըստ վրաց ժամանակագրի, մոնղոլները «սկսեցին հաստատվել. ձմեռը բնակվում էին Պարտավում, Քուռ ափին, Իորի եզերքին և վերև՝ մինչև Գագ»[43]։ Ուրեմն, Վահրամյանների իշխանության հյուսիսային՝ մերձկուրյան դաշտավայրային արգավանդ շրջանը Շամքորից մինչև Գագ դարձել էր մոնղոլների ձմեռանոցը. այստեղ ևս լրացուցիչ արոտավայրեր ձեռք բերելու նպատակով քոչվորական անասնապահությամբ զբաղվող մոնղոլներն անխնա ոչնչացնում էին այգիներն ու ցանքատարածությունները։

Գրաված շրջանների քաղաքական յուրացման նպատակով մոնղոլներն օգտագործեցին նոյինների ինստիտուտը, առանձին տարածքների ղեկավարումը դնելով այս կամ այն նոյինի հսկողության տակ[44]։ Ընդ որում, սկզբում մոնղոլներն Անդրկովկասում նվաճած հողերի վարչատարածքային բաժանումը թողեցին անփոփոխ և տեղական նախկին իշխողները դարձան այս կամ այն նոյինի վասալը, պատասխանատու լինելով իրենց տիրույթներում հարկերի հավաքման ու դրանք մոնղոլներին հանձնելու համար։ Բացի այդ, նրանք պարտավոր էին իրենց վրորդով մասնակցել մոնղոլների ռազմական գործողություններին։ Չնայած աղբյուրները ոչինչ չեն հաղորդում, թե այս կամ այն շրջանը ո՞ր նոյինի տնօրինության տակ դրվեց, տրամաբանական է կարծել, որ նրանցից յուրաքանչյուրին բաժին էր ընկել իր գրաված տարածքը։ Ուրեմն հավանական կլիներ ենթադրել, որ Վահրամյանների իշխանությունը տրվել է Մոլար նոյինին, քանի որ դրա մեծ մասը նա էր գրավել։ Սակայն, ըստ Գրիգոր Ականացու, Մոլարը Վահրամյանների իշխանությունը նվաճելուց հետո Մուղանի իրենց ձմեռանոցը վերադառնալով վախճանվել է[45], եթե պատմիչը ճշմար-

---

39 «Վրաց ժամանակագրություն», էջ 75, հմմտ. Կիրակոս Գանձակեցի, էջ 263, Գրիգոր Ականացի, էջ 8, Վարդան Արևելցի, էջ 145։

40 Կիրակոս Գանձակեցի, էջ 263, «Վրաց ժամանակագրություն», էջ 76։

41 გურამ მაღლაკელიძე, ქართველი და სომეხი ხალხების ურთიერთობა XIII—XVIII სს., თბილისი, 1982, გვ. 97.

42 „საქართველოს ისტორიის ნარკვევები", ტ. III, გვ. 549.

43 «Վրաց ժամանակագրություն», էջ 76։

44 Նույն տեղում, Գրիգոր Ականացի, էջ 10—11։

45 Գրիգոր Ականացի, էջ 9։

տացի է, ապա պետք է կարծել, որ խնդրո առարկա իշխանության տնօրինությունը թերևս հանձնվել է նրա տան վերակացու Զուչուլին[46]։

1242 թ. Ռուսուդան թագուհին մոնղոլների հետ բանակցելու ուղարկեց Ավագ և Շահնշահ Զաքարյաններին, Վահրամ Գագեցուն, ինչպես նաև Հերքի էրիսթավ Շոթա Կուպրին[47]։ Մինչ բանակցությունները շարունակվում էին, մոնղոլները համբացած Զարմաղանին փոխարինած Բաչու նոյինի գլխավորությամբ ձեռնամուխ եղան հարավային Հայաստանի նվաճմանը, դրան մասնակից դարձնելով նաև հպատակ հայ ու վրաց իշխաններին՝ իրենց զորքերով։ Մոնղոլների համար հաջող ավարտ ունեցած այդ արշավանքներին (1242—1243) զորքով մասնակցեցին և աչքի ընկան նաև Վահրամ Գագեցին ու Աղբուղան։ Կարինի գրավումից հետո (1242) մյուս հայ իշխանների նման նրանք մոնղոլներից փրկագնեցին բազմաթիվ քրիստոնյա գերիների, ինչպես նաև գնեցին նրանց թալանած բազմաթիվ հայկական ձեռագրեր, որոնք այնուհետև նվիրեցին հյուսիսային Հայաստանի հոգևոր հաստատություններին[48]։ Աղբուղան հատկապես աչքի ընկավ Իկոնիայի սուլթան Ղիաթեդդին Քեյ Խոսրովի հսկայական բանակի դեմ 1243 թ. մղված Զմանկատուկի ճակատամարտում։ Համաձայն Գրիգոր Ականացու, այդ ճակատամարտի ժամանակ հայ ու վրաց իշխանները և հատկապես «տերն Գագայ, որդին մեծին Վարհամայ, թոռն բլու Զաքարէի, Աղբուղայ անուն, քաջապէս մարտուցեալ ընդդէմ զօրու սուլտանին... բաղում ամիրայից և մեծամեծաց գլուխս հատեալ, յոյժ տրտմեցուցին զսուլտանն»[49]։ Վահրամն ու Աղբուղան, անկասկած, մասնակցել են նաև Երզնկայի, Կեսարիայի, Սեբաստիայի և այլ քաղաքների գրավմանը։

Արշավանքների ավարտից հետո Ռուսուդանի պատվիրակների ու մոնղոլների միջև բանակցությունները վերսկսվեցին, և թագուհին անվտանգության երաշխիքներ ստանալով՝ որդու հետ վերադարձավ Տփխիս։ Նրանց դիմավորողների թվում էր նաև Վահրամ Գագեցին[50]։ Ռուսուդանն ընդունում է մոնղոլական գերիշխանությունը, իսկ մոնղոլները իրենց հերթին Ռուսուդանի որդի Դավիթին ճանաչում են վրաց թագաժառանգ։ Բաչուն նրան ուղարկում է Բաթու խանի զորակայանը, իսկ վերջինս իր հերթին թագաժառանգին ճանապարհում է մեծ խան Մանգուի մոտ՝ Կարակորում։ 1245 թ. Ռուսուդանը վախճանվում է, և երկիրը մատնվում է անտերության, քանի որ Կարակորում էր ուղարկվել նաև Ավագ աթաբեկը։ Այս պայմաններում մոնղոլները երկրում մտցրին իրենց վարչաձևից բխող թումանների ինստիտուտը, վրացական պետությունը բաժանելով մի քանի ռազմավարչական շրջանների՝ թումանների, որոնց գլուխ կարգվեցին տեղական ավատական ավագանու ներկայացուցիչները, վերածվելով մոնղոլական պաշտոնյաների։ Նրանց գործունեությունը վերահսկում էր այս կամ այն նոյինը։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ամեն մի թուման պարտավոր էր մոնղոլների ռազմական գործողություններին մասնակցելու համար 10-հազարանոց զորք հանել, վրացական պետության վարչատարածքային կառուցվածքում կատարվեցին էական փոփոխություններ։ Նախկին վարչական շրջանները խոշորացվեցին, հանգեցնելով դրանց թվաքանակի կրճատմանը (25-ի փոխարեն մնաց 7-ը)։ Վարչական այս բարեփոխումը նոյինների ինստիտուտի ստեղծումից հետո մոնղոլների հաջորդ քայլն էր՝ վրացական թագավորությունն իրենց տնտեսական ու քաղաքական սիստեմի մեջ ընդգրկելու ուղղությամբ։ Վարչական նոր բաժանմամբ «Եգարսլան Բակուրցիսխելուն... հանձնեցին Հերքի, Կախքի, Կամբեչիանի զորքը, Թփղիսից մինչև Շամախու սարը։ Շանշեին (Շահնշահին—Ա. Շ.) հանձնեցին իր ու Ավագի կալվածքները, Վահրամ Գագեցուն՝ ողջ Սոմխիթը, Գրիգոր Սուրամելիին՝ Քարթլին, Թորել-Դամբեկելիին... Ջավախքը, Սամցխեն և վերև՝ մինչ Կարնո

46 Կիրակոս Գանձակեցի, էջ 250, 251։
47 «Վրաց ժամանակագրություն», էջ 76։
48 Կիրակոս Գանձակեցի, էջ 279—280։
49 Գրիգոր Ականացի, էջ 14։
50 «Վրաց ժամանակագրություն», էջ 79։

քաղաք, իսկ Յոտնե Դադիանիին ու Ռաճայի էրիսթավին՝ ողջ այնկողմյան թագավորությունը»[51]։ Մեջբերված հատվածից պարզ երևում է, որ Ավագի բացակայության պատճառով նրա և Շահնշահի տիրույթները դարձել էին մեկ թուման և հանձնվել վերջինիս[52]։

Ինչ է նկատի ունեցել վրաց ժամանակագիրը, գրելով, թե Վահրամ Գագեցուն էր հանձնվել «ողջ Սոմխիթը»։ Դժվար չէ նկատել, որ Սոմխիթը=Հայաստան կամ Սոմխիթը=հարավային Վրաստան դիտելու դեպքում Շահնշահի և Գրիգոր Սուրամելու թումանները հանձնած կլինենք Վահրամ Գագեցուն։ Սոմխիթը Վահրամյանների իշխանության տարածքի հետ նույնացնելը ևս ճիշտ չի լինի, քանի որ նախ ժամանակագիրը հատուկ նշում է «ողջ Սոմխիթը» Վահրամ Գագեցուն հանձնելը և, բացի այդ, 10-հազարանոց զորք դուրս բերելու համար այն պետք է ունենար առնվազն 400.000 բնակիչ (մոնղոլները «հող ունեցող ինը գեղջուկից մի զինվոր գնացող էին սահմանում»)[53], մի թիվ, որը չափազանց մեծ է։ Հետևաբար, Վահրամ Գագեցուն հանձնված թումանը պետք է ունենար նրա իշխանությունից մեծ տարածք, ընդգրկելով նաև սահմանակից որոշ շրջաններ։ Իսկ որո՞նք են դրանք։ Վահրամյանների իշխանությանը հյուսիսից Կուր գետով սահմանակից էր վրացական Կամբեչիանի մարզը, որը դարձել էր Հերքի էրիսթավ Շոթա Կուպրի նախկին վասալ Եգարսլան Բակուրցիխսելու թումանի մի մասը։ Արևելքում այն սահմանակից էր Գանձակի նախկին աթաբեկությանը, որը երբեք վրացական պետության կազմի մեջ չի մտել։ Հարավից Վահրամյանների իշխանությունը կից էր Ավագի, իսկ արևմուտքից՝ Շահնշահի տիրույթներին (Սոդք, Միափոր, Ջորոփոր, Կայեն, Լոռի)։ Ուրեմն Վահրամ Գագեցուն հանձնված թումանի մեջ են մտցվել հենց Կայենը, Ջորոփորն ու Լոռին, ինչպես նաև Սևանա լճի հյուսիսային ափին ընկած Սոդքն ու Միափորը, որոնք հարավից կից էին Վահրամյանների իշխանությանը։ Այսպիսով, Վահրամ Գագեցու թումանը տարածքով համապատասխանում էր Կյուրիկյան նախկին թագավորությանը[54] և երկրի արևելքում Իվանե աթաբեկի ու Վահրամյանների նվաճած հայկական որոշ շրջաններին։ Հետևաբար, վրաց ժամանակագրի օգտագործած «Սոմխիթ» տերմինի տակ պետք է հասկանալ հյուսիսային Հայաստանի այսրկուրյան հատվածը, որի օգտին է խոսում ժամանակի հայ-վրացական աղբյուրների համադիր քննությունը[55]։

Երկիրը թումանների բաժանվելուց հետո վրացական պետությունում ավատական ներհակություններն ավելի խորացան։ Դա մասամբ հետևանք էր երկրի փաստական կառավարիչ դարձած Եգարսլանի դիրքերի ուժեղացման։ «Ողջ վրաց ազգը,— նշում է վրաց ժամանակագիրը,— նրա հրամանին էր ենթարկվում... այդ թվում և... Շանշեն, Վահրամ Գագեցին և մյուս բոլոր իշխանները»[56]։ Բնական է, որ երկրի մեծատոհմիկ ազնվականությունը չէր կարող հանդուրժել մինչ այդ ավատական սանդուղքում աննշան տեղ գրավող այդ երիտասարդ ու եռանդուն մարդու բարձրացումը։ Դժգոհելու հիմքեր ունեին հատկապես Շահնշահն ու Վահրամ Գագեցին, որոնք, ինչպես նշվեց, Ավագի հետ միասին Ռուսուդանի օրոք երկրում գերազդեցիկ դիրքեր էին գրավում (Վահրամ Գագեցին վարում էր պետության մսախուրթ-ուխուցեսությունը)։ Հենց Վահրամ Գագեցին ու Շահնշահն էլ անցան Եգարսլանին ընդդիմադիր

---

51 Նույն տեղում, էջ 88։

52 Հետևաբար, Պ. Ինգորոքվան սխալվում է այս թումանը դիտելով երկուսը (Павле Ингороква, Шота Руставели (1166—1250), («Литературная Грузия», 1972, № 1, с. 85)։ Թումանների թիվը 8-ն է հաշվված նաև «Վրաստանի պատմության ակնարկներում» („საქართველოს ისტორიის ნარკვევები", ტ. III, გვ. 553).

53 «Վրաց ժամանակագրություն», էջ 108։

54 Նկատենք, որ Ղ. Ալիշանը Վահրամ Գագեցուն անվանում է «ժառանգ Կյուրիկյան թագավորաց» (Վարդան Արևելցի, էջ 144)։

55 «Սոմխիթ» տերմինի մասնավոր քննությանը մտադիր ենք անդրադառնալ առանձին հոդվածով։

56 «Վրաց ժամանակագրություն», էջ 90—91։

ավատական խմբավորման գլուխ, 1245 թ. դիմելով վճռական գործողություններին։ Վրաց ժամանակագրի համաձայն՝ Կոխտասթավիում «հավաքվեցին թագավորության դիդեբուլները, որովհետև Եգարսլանը ցանկանում էր իշխանավոր դառնալ նրանց հանդեպ, որ նրանցից ազնվատոհմիկ չէր։ Ուստի հավաքվեցին Վրաստանի իշխանները. Շանշին, Վահրամ Գագեցին, Ղվաղվարե Ջաղելին, Սարգիս Թմոգվեցին... Գրիգոր Սուրամելին՝ Քարթլիի էրիսթավը, Դամրկել Թորելին, Օրբելիները և բազում [այլ] իշխանավորներ։ Սկսեցին որոնել Լաշայի որդի Դավիթին»[57]։ Խորհրդակցության մասնակիցների կազմից երևում է, որ Եգարսլանի հակառակորդների թվում էին մնացած 6 թումաններից 4-ի պետերը։ Պարզվում է նաև, որ Կոխտասթավիում հավաքվածները «սկսեցին որոնել Գեորգի Լաշայի որդի Դավիթին»։ Բայց չէ՞ որ սրանք ժամանակին Ռուսուդանի որդու թագադրության արարողությանը մասնակցելուց խուսափած վրացական ու հայ իշխաններն էին, որոնք այժմ պահը հարմար էին դիտում թագի իրենց թեկնածուին գահ բարձրացնելու և, միաժամանակ, նորելուկ Եգարսլանին ասպարեզից հեռացնելու համար։ Պատահական չէր նաև խորհրդակցությանն արևմտավրացական իշխանների չմասնակցելը։ Ըստ երևույթին նախքան խորհրդակցությունը նրան հրավիրվածները կամ իրենք էին պահվել հավաքվելու նպատակի մասին և Ռուսուդանի որդուն հավատարմության երդում տված արևմտավրացական ավատները չէին ներկայացել և դրանով իսկ ձեռնպահ մնացել նրա դեմ որևէ քայլ կատարելուց կամ էլ հավաքի կազմակերպիչները նրանց պարզապես չէին կանչել, քաջ գիտակցելով, որ կփորձեն ձախողել իրենց պլանները։

Խորհրդակցության ավարտից հետո նրա մասնակիցները դիմում են Բաչու Նոյինին, խնդրելով Կեսարիայից բերել և գահ բարձրացնել Գեորգի Լաշայի որդուն։ Մոնղոլներին, իհարկե, վրացական թագավորությանը համակած ավատական ներհակությունները ձեռնտու էին։ Սակայն նկատի ունենալով, որ կենտրոնական իշխանության բացակայության պատճառով դրանք կարող են ընդունել արյունահեղ բնույթ, խախտելով երկրի ներքին անդորրը, մոնղոլական տեղական իշխանությունները որոշեցին ընդառաջել խորհրդակցության մասնակիցներին, առավել ևս, որ ըստ երևույթին Կարակորումում գտնվող Դավիթի մասին նրանց ևս ոչինչ հայտնի չէր։

Գեորգի Լաշայի որդուն գահ բարձրացնելու գործում Վահրամ Գագեցու ակնառու դերը շեշտում են և՛ «Վրաց ժամանակագրությունը», և՛ Կիրակոս Գանձակեցին և՛, մանավանդ, Գրիգոր Ականացին, չնայած այս իրադարձության հետ կապված որոշ մանրամասներում նրանք երբեմն իրարամերժ են։ Այսպես, օրինակ, ըստ Կիրակոս Գանձակեցու, Գեորգի Լաշայի որդին գահի թեկնածու է առաջադրվել դեռ Ռուսուդանի կենդանության օրոք[58]։ Սակայն այս վկայությունը հերքվում է ոչ միայն վրաց ժամանակագրի, այլև Գրիգոր Ականացու տվյալներով, որոնց համաձայն «Ուռուզուքան մահուամբ փոխեցաւ յաշխարհէս. և վիրք մնացին անտերունչք... ապա... ընդ միտ արկեալ զորդին թագաւորին իւրեանց զԴաւիթ, որ էր ի բանտի ի Հոռոմք»[59]։ Երբ խորհրդակցության մասնակիցները Բաչու Նոյինին հայտնում են Գեորգի Լաշայի որդի Դավիթի Կեսարիայում գտնվելու և նրան գահ բարձրացնելու իրենց ցանկության մասին, նա իր զորահրամանատարներից Անգուրակին 100 զինվորով Վահրամ Գագեցու և Սարգիս Թմոգվեցու հետ միասին ուղարկում է Կեսարիա՝ արքայորդուն հայրենիք բերելու առաքելությամբ[60]։ Նրանք հաջողությամբ հասնում են Կեսարիա, գտնում Դավիթին և բերում Տփխիս, որտեղ նրանց մեծ շուքով դիմավորում է երկրի ավագանին, բացառությամբ Եգարսլանի[61]։ Դավի-

57 Նույն տեղում, էջ 95։

58 Կիրակոս Գանձակեցի, էջ 288—289, 315—316։

59 Գրիգոր Ականացի, էջ 17։

60 «Վրաց ժամանակագրություն», էջ 95, Գրիգոր Ականացի, էջ 18, Կիրակոս Գանձակեցի, էջ 288։

61 «Վրաց ժամանակագրություն», էջ 96։

թը Մծխեթում վրաց կաթողիկոսի կողմից օծվում է թագավոր[62] (թագադրմանը ներկա էին նաև Վահրամ Գագեցին ու Աղբուղան), և ապա իր կրտմնակիցների հետ ներկայանում Բաչու նոյինին։ Նրան մոնղոլների մոտ տարած Վահրամ Գագեցին հայտարարում է հետևյալը. «որդի արքայի մերոյ է և տարապարտ զրկեալ է ի տերութենէ իւրմէ»[63]։ Բաչու նոյինը Դավիթին Սարգիս Թմոգվեցու, Աղբուղայի և Շահնշահի որդի Զաքարիայի հետ ուղարկում է Բաթու խանի մոտ։ Սակայն վերջինս Դավիթին գահի վրա հաստատելու իրավունքը թողնում է մեծ խան Գույուկին և Աղբուղային ու Զաքարիային իր մոտ պահելով, թագաժառանգին Սարգիս Թմոգվեցու հետ ուղարկում է Կարակորում։ Գահի երկու հավակնորդներին (Գեորգի Լաշայի և Ռուսուդանի որդիներին) 1246 թ. Կարակորումում հանդիպած Պլանո Կարպինին նշում է, որ նրանցից յուրաքանչյուրը իր կողմնակիցների օգնությամբ. բերելով համապատասխան փաստարկներ, ձգտում էր ինքը տիրանալ գահին[64]։ Նույնն է հաղորդում նաև «Վրաց ժամանակագրությունը»[65]։ Այդ ընթացքում մոնղոլներն Ավագին «շուրջ հինգ տարի»[66] Կարակորումում պահելուց հետո ուղարկում են Վրաստան։ Տեղ հասնելուն պես նա մտրակահարում և պատվաղրկում է իրեն ձիու վրա դիմավորել համարձակված Եգարսլանին[67], հուրախություն նրա հակառակորդների, մասնավորապես Վահրամ Գագեցու։ Ինչ վերաբերվում է գահակալության հարցին, ապա մոնղոլները հավատարիմ իրենց ավանդական քաղաքականությանը՝ «գրգռել իրար դեմ... իշխաններին, պահպանել անմիաբանությունը նրանց մեջ, հավասարակշռել նրանց ուժերը»[68], վրացական թագավորությունը բաժանեցին երկու մասի։ Արևելյան Վրաստանը և Զաքարյան Հայաստանը բաժին ընկավ Գեորգի Լաշայի որդուն, իսկ Արևմտյան Վրաստանը՝ Ռուսուդանի տղային։ Նրանցից առաջինը ստացավ Ուլու Դավիթ, իսկ երկրորդը՝ Դավիթ Նարին անվանումը։

1247 թ. թումանները վերակառուցվեցին։ Ավագ աթաբեկը Կարակորումից վերադառնալով ստանձնեց ժամանակավորապես Շահնշահին հանձնված իր կալվածքների (որոնք կազմեցին առանձին թուման) կառավարումը։ Բացի այդ, Գյուրջիստանի վիլայեթի կազմում (այժմ այդպես էր կոչվում վրացական թագավորությունը) ստեղծվեց ևս մեկ թուման և այդպիսով դրանց թիվը հասավ 9-ի։ Այս մասնակի վարչական վերափոխումները շոշափեցին նաև Վահրամ Գագեցու թումանի սահմանները[69], չնայած այն այժմ մեծ դժվարությամբ կկարողանար 10-հազարանոց զորք դուրս բերել։

1248 թ. հարկահավաքման նպատակով Անդրկովկաս եկավ բասղաղ Արղունը։ Կողոպուտ հիշեցնող այդ հարկահանությունը (գանձվում էր հարկատուի շարժական ու անշարժ ունեցվածքի 1/10—1/30 մասը) ուղեկցում էր բազմաթիվ կամայականություններով, ուստի հարուցեց անգամ մոնղոլներին հլու հնազանդ հայ ու վրաց իշխանների դժգոհությունը, տեղիք տալով ապըս-

---

62 Կիրակոս Գանձակեցի, էջ 289։ Այստեղ պատմիչը դեպքերի ժամանակագրական կարգը շփոթել է։

63 Նույն տեղում։

64 «Путешествие в восточные страны Плано Карпини и Рубрука», М., 1957, с. 75

65 «Վրաց ժամանակագրություն», էջ 99—100։

66 Նույն տեղում, էջ 97։

67 Նույն տեղում, էջ 100։

68 C. Marx, Secret Diplomatic History of the Eighteenth Century, London, 1899, p. 38 (մեջբերումը տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երևան, 1976, էջ 624).

69 Մաթոսավանքի (Իջևանի շրջանում) Աստվածածին եկեղեցու շինարարական արձանագրության համաձայն այն գրվել է 1247 թ.՝ «յիշխանութեան Ավագին»։ Դա նշանակում է, որ այդ շրջանը նորից գտնվում էր Ավագի տիրույթների սահմաններում («Դիվան հայ վիմագրության», պրակ VI, կազմեցին Ս. Ա. Ավագյան, Հ. Մ. Զանփոլադյան, Երևան, 1977, էջ 15)։

տամբության։ 1249 թ. տեղի ունեցած այդ ապստամբությանը[70] մասնակցեց նաև Վահրամ Գագեցին[71]։ Հայ և վրաց խոշոր ավատների այս ընդվզումը, սակայն, մատնության պատճառով հենց սկզբից դատապարտվեց ձախողման։ Ապստամբության կազմակերպիչների տիրույթներն անխնա ավերվեցին (ըստ Վարդան Արևելցու և Կիրակոս Գանձակեցու առավել շատ տուժեցին վրացական շրջանները)[72], իսկ նրանք մահից կարողացան ազատվել միայն փրկագնվելու և մոնղոլներին ձիեր տալու միջոցով։ 1249 թ. ապստամբությանը Վահրամ Գագեցու մասնակցությունը շուրջ չորս տասնամյակ երկրի քաղաքական կյանքում նրա խաղացած մեծ դերի վերջին ակտն էր։ Այս իրադարձությունից հետո նա այլևս աղբյուրներում չի հիշատակվում, իսկ 1252 թ. Խորանաշատում գրված ձեռագրերից մեկի հիշատակարանից պարզվում է, որ այդ թվականին նա այլևս կենդանի չէր[73]։ Վահրամյանների իշխանությունը գլխավորում էին Աղբուղան, որը, անշուշտ, ժառանգել էր հոր մսախուրթ-ուխուցեսության պաշտոնը և նրա որդիները՝ Վահրամը, Զաքարեն ու Իվանեն («ի գլուխ իշխանութեան երկրիս այսմ Աղպուղային և որդոց իւրոյ Վահրամ և Զաքարէ և Իվանեայ»)[74]։ Ի դեպ, Աղբուղայի որդիներին նույն հաջորդականությամբ է հիշատակում նաև Կիրակոս Գանձակեցին[75]։ Այսպիսով Վահրամյանների տոհմածառը ստանում է հետևյալ տեսքը.



Վերոհիշյալ հիշատակարանը կարճառոտ տեղեկություններ է հաղորդում 1250-ական թվականներին Վահրամյանների իշխանության աննախանձելի վիճակի մասին. «գրեցաւ... գիրքս այս ի թուաբեր ամանակաց Հայկազնեան ի Զ և ի Ա համարին [1252], ի նեղ և ի դառն ամանակիս և ի դարուս հետևման և այս վասն մեղաց մերոց, զի բազմացաւ անհնարին վիշտք և նեղութիւնք ի վերայ

70 Ապստամբության մասին տե՛ս «Վրաց ժամանակագրություն», էջ 93—95, Կիրակոս Գանձակեցի, էջ 319—321, Գրիգոր Ականացի, էջ 20—21, Վարդան Արևելցի, էջ 148։

71 «Վրաց ժամանակագրություն», էջ 95։

72 Վարդան Արևելցի, էջ 148, Կիրակոս Գանձակեցի, էջ 320—321։

73 Մատենադարան, ձեռ. № 2273, թ. 361բ։

74 Նույն տեղում։

75 Կիրակոս Գանձակեցի, էջ 163։

76 Վահրամյանների տոհմի ավագ սերունդների ներկայացուցիչների մասին տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1974, № 4, էջ 103—104, 107—108։ Կ. Թումանովը Վահրամյանների տոհմածառը հասցնում է մինչև XIX դ. կեսերը։ Սակայն պետք է նկատել, որ այդ տոհմածառը Վահրամյանների ավագ սերունդներին վերաբերող հատվածներում անգամ խիստ սրբագրելի է, իսկ հետագա, սերունդների տոհմածառը աղբյուրներով չի հիմնավորվում (Cyrille Toumanoff Manuel de Généalogie et de Chronologie pour l'histoire de la Caucasie Chrétienne (Arménie-Géorgie-Albanie), Roma, 1976, p. 297—301).

ամենայն աշխարհի, ի ձեռն անաւրէն և այլակերպ զաւրուն նեստողաց, որով բազմացեալ են քան զամենայն զաստեղս և քան զավազ ծովուն»[77]։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում երկրի տնտեսական քայքայումն արտացոլվել է նաև մի այնպիսի ուշագրավ փաստաթղթում, ինչպիսին Ռըկոնիի ընծայագիրն է[78]։ Համաձայն այդ վավերագրի, մոնղոլների կողմից 1258 թ. Բաղդադը գրավվելուց հետո՝ 1250-ական թվականների վերջին կամ 1260-ականների սկզբին, Սամցխեի էրիսթավներից մեճուրլեթ-ուխուցես Կախա Թորելին ոմն խոջա Սալամից ու նրա որդուց, հայ Հասանից ու հրեա Հովսեփից գնել է Խովլե գյուղը (Վրաց. ՍՍՀ Կասպի շրջանում) և նվիրել Ռկոնիի վանքին։ Վերջիններս իրենց հերթին Խովլեն 65 հազար սպիտակով ձեռք էին բերել ոմն Աղբուղայից ու նրա որդիներից[79]։ Ընդ որում, Աղբուղայի հայր Վահրամին այդ գյուղը նվիրել էին «ափխազաց (իմա՝ վրաց) թագավորները»[80]։ Այս սկզբնաղբյուրի հատուկ քննությամբ զբաղված Ն. Շոշիաշվիլին այնտեղ հիշատակված Վահրամի ու Աղբուղայի և Վահրամ Գագեցու ու նրա որդի Աղբուղայի նույնացումը համարել է հավանական[81]։ Նման ենթադրությունը ընդունելի է, քանի որ կան դրա օգտին խոսող լուրջ կռվաններ։ Ինչպես տեսանք, Խովլեի վաճառքը Աղբուղան կատարել է որդիների հետ, հանգամանք, որ խոսում է նրանց հոմիշխանության մասին։ Բայց չէ որ վերոբերյալ հիշատակարանի համաձայն, Աղբուղա Վահրամյանն ու նրա որդիները ևս հոմիշխան էին։ Ընդ որում, որ տվյալ պարագայում կարևոր է, թե՞ Խովլեն վաճառող Աղբուղան և թե Աղբուղա Վահրամյանն ունեին մի քանի որդի։ Պակաս էական չէ և այն հանգամանքը, որ խնդրո առարկա ժամանակամիջոցում սկզբնաղբյուրները Վահրամ Գագեցուն և Աղբուղային համանուն այլ հայր ու որդի իշխաններ չեն հիշատակում։ Ինչ վերաբերում է ընծայագրում հիշատակված «ափխազաց թագավորներին», ապա դրանք ոչ այլ ոք էին, եթե ոչ Ուլու և Նարին Դավիթները, որոնք թագադրվելուց հետո սկզբում (մինչև 1259 թ.) Տփխիսում համատեղ էին գահակալում և արքայական հրովարտակները միասին էին վավերացնում[82]։ Հենց նրանք են 1247—1250 թթ. Խովլեն նվիրել Վահրամին։ Բայց չէ որ Ուլու Դավիթը դրանով էր կարող վարձահատույց եղած լինել Վահրամ Գագեցուն՝ իրեն մատուցած մեծ ծառայության դիմաց, իսկ Դավիթ Նարինը որպես գահակից վավերացրել է այդ հրովարտակը, որի մասին հիշատակում է Կախա Թորելին[83]։

Եթե մեր այս դատողությունները ճիշտ են, ապա հանձին վերոհիշյալ ընծայագրի գործ ունենք 1254 թ. Արղունի անցկացրած աշխարհագրից հետո (որով մոնղոլական հարկային լուծն ավելի ծանրացավ) ոչ միայն երկրում, այլև մասնավորապես Վահրամյանների տիրույթներում, հողային հարաբերությունները և հողատերերի ժառանգական իրավունքները կարգավորող նորմերն արտացոլող եզակի փաստաթղթի հետ։ Պարզվում է, որ մոնղոլական կեղեքիչ հարկային լծի պայմաններում կալվածքային տնտեսությունները դադարել էին եկամտաբեր լինելուց և դարձել առուծախի առարկա։ «Այդ ժամանակ,— կարդում ենք ընծայագրում,— շատ... հողեր մարդկանց վրա ծանրացած հարկատվության պատճառով վաճառվում էին։ Ոսկին դարձել էր թանկ, իսկ գյուղն էժանացել էր»[84]։

---

77 Մատենադարան, ձեռ. № 2273, թ. 361բ։

78 В. Д. Дондуа, Писанье о вкладе Кахи Торели в Рконский монастырь („ქართული წყაროთმცოდნეობა", ტ. II, თბილისი, 1968, გვ. 50—76).

79 Նույն տեղում, էջ 55։

80 Նույն տեղում, էջ 59։

81 Н. Ф. Шошиашвили, Рконская грамота (автореферат канд. диссертации), Тбилиси, 1953, с. 6.

82 «Վրաց ժամանակագրություն», էջ 101։

83 „ქართული წყაროთმცოდნეობა", ტ. II, გვ. 59.

84 Նույն տեղում, էջ 54։

1256 թ. մեծ խան Մանգուն իր եղբայր Հուլավուին նշանակեց Առաջավոր Ասիայում կազմակերպված նոր ուլուսի կառավարիչ։ Այդ ուլուսը շուտով դարձավ փաստորեն անկախ պետություն, ստանալով Իլխանություն անունը։ Հրամայական զորքով ժամանելով Անդրկովկաս, Հուլավուն բանակեց Մուղանի դաշտավայրում և սկսեց պատրաստվել դեպի Ալամութ, Բաղդադ ու հյուսիսային Միջագետք արշավելուն։ 1257 թ. սկսված այդ արշավանքներին մոնղոլական բանակի կազմում մասնակցում էին նաև հայ ու վրաց իշխաններն իրենց զորքերով։ Չնայած սկզբնաղբյուրներում այդ արշավանքներին Աղբուղայի և նրա որդիների մասնակցելու մասին փաստեր չկան, բայց, անկասկած, նրանք ևս եղել են արշավողների շարքերում։ Նման պնդման համար հիմք է տալիս Բաղդադի և Նփրկերտի (Մայաֆարկին) գրավմանը Վահրամյանների վասալ Թաղիադինի՝ Մածնաբերդի Կյուրիկյան իշխան Կյուրիկեի որդու, մասնակցությունը[85]։ Թաղիադինի ջոկատը կազմում էր Վահրամյանների զորքի մի մասը, քանի որ ներկայացնում էր նույն թումանը։ Թաղիադինի հայր Կյուրիկեն հիշատակվում է Խորանաշատի վանքի 1246 թվակիր նվիրատվական արձանագրության մեջ[86]։ Կյուրիկեն ուներ ևս երկու որդի՝ Փահլավան և Աղսարթան[87]։ Մածնաբերդի Կյուրիկյանների հաջորդ սերնդի ներկայացուցիչներից հայտնի է միայն Թաղիադինի որդի Սարգիսը։ Հաղբատի արձանագրություններից մեկի համաձայն 1249 թ. վանահայր Համազասպի եղբայր Գրիգորը «գանձով» Կյուրիկյանների այդ շառավղից գնել է Ակռավաձոր գյուղն ու նվիրել Հաղբատի վանքին[88]։ Պատահական չէ, որ այստեղ ևս գործ ունենք ավատի կողմից իր կալվածքը հանդիսացող գյուղի վաճառքի հետ։ Այս փաստը խոսում է Մածնաբերդի Կյուրիկյանների վերջին շառավիղների տնտեսական քայքայման և աստիճանական հողազրկման մասին։

Վահրամյանների մյուս վասալների՝ Նոր Բերդի Կյուրիկյանների մասին ևս շատ կցկտուր տեղեկություններ են պահպանվել, որոնք հասնում են մինչև 1237 թ.։ Արդեն նշեցինք, որ Վասակ իշխանը շարունակեց Վահրամյանների իշխանության հոգևոր կենտրոն Նոր Վարագի վանական համալիրի շինությունը, 1237 թ. ավարտելով Աստվածածին եկեղեցու կառուցումը։ Այն օծվեց 1240 թ.[89]։ Վասակի կինն էր անեցի հեջուբ Վահրամի դուստր Խաթունը[90]։ Հոռոմոսում Նոր Բերդի իշխանուհու թողած արձանագրությունից երևում է, որ նրանք ժառանգ չեն ունեցել[91]։ Վասակի մահվան թվականը հայտնի չէ։ Նրանից հետո Վահրամյանների իշխանության հոգևոր առաջնորդ արքեպիսկոպոս Հովհաննես Տուեցին կառուցեց Նոր Վարագի գավիթը։ Վասակ իշխանի մահվանից հետո Նոր Բերդի Կյուրիկյանների հողերն անցան Վահրամյաններին։

Մոնղոլական տիրապետությունը բացասական հետևանքներ ունեցավ նաև Վահրամյանների իշխանության բուռն ծաղկում ապրող մշակութային կյանքի վրա։ Ճիշտ է, սկզբնական շրջանում այն շարունակում էր իր վերելքը, սակայն արդեն 1280-ական թվականներին սկսեց լճացում ապրել և ի վերջո մարեց։ Արդեն նշվեց, որ Վահրամյանների իշխանության տարածքում էր գործում Վանական վարդապետը։ Նրա ղեկավարած դպրոցի հռչակն այնքան մեծ էր, որ այնտեղ ուսանելու էին գալիս Հայաստանի անգամ ամենահեռավոր գավառներից։ Մոնղոլական գերությունից ազատվելուց հետո Վանականը վերադարձավ Խորանաշատ և շարունակեց վանքի կառուցումն ու իր գիտամանկավարժական բազմաբեղուն գործունեությունը։ 1246 թ. ամենայն հավանականությամբ համազգային նշանակություն ունեցող հարց լուծելու նպատակով Խորանաշատ են այցելել հայոց կաթողիկոս Կոստանդինը և Աղվանից կաթո-

85 Գրիգոր Ականացի, էջ 28։
86 Արմֆանի «Տեղեկագիր», 1940, № 4—5, էջ 175։
87 Կիրակոս Գանձակեցի, էջ 154։
88 Կարո Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 177։
89 Կիրակոս Գանձակեցի, էջ 153։
90 Արմֆանի «Տեղեկագիր», 1940, № 4—5, էջ 172։
91 Նույն տեղում։

դիկոս Ներսեսը։ Այդ են վկայում վանքում նրանց թողած արձանագրությունները[92]։ Վանականի մահվանից հետո (1251) Խորանաշատ դպրոցի ղեկավարությունը ստանձնեց նրա աղգական և աշակերտ Գրիգորիս վարդապետը[93], որի օրոք կրթական այդ օջախը սկսեց կորցնել իր երբեմնի փայլը։ Խորանաշատում չնայած XIII դ. երկրորդ կեսին ևս գրչագրվում էին տարաբնույթ ժողովածուներ, բայց այն անկում ապրեց նաև որպես գրչության կենտրոն։

Վահրամյանների իշխանության մասին մեր հաջորդ տեղեկությունը թվագրվում է 1284-ով։ Այդ թվականին վրաց թագավորը՝ Դեմետրեն, աթաբեկ նշանակված Տարսայիճ Օրբելյանի ենթակայությանն է հանձնում «Զամենայն աշխարհս Հայոց, զտունն Ավագեան, և զտունն Շահնշահեան և զԳագեցին և զորդիսն Սադուն աթաբեկին»[94]։ Ստեփանոս Օրբելյանի այս տողերից պարզվում է, որ Վահրամյանների իշխանությունը 1280-ական թվականներին ևս Գյուրջիստանի վիլայեթի մեջ մտնող ավատական խոշոր միավորներից էր։ Չնայած դրան, Վահրամյանները երկրի կյանքում նախկին ազդեցությունը չունեին։

Ստեփանոս Օրբելյանի վերոհիշյալ վկայությունը Զաքարյան Հայաստանի (և ոչ միայն) կյանքում կարևոր դեր ունեցած Վահրամյանների ավատական տան և նրանց իշխանության վերաբերյալ գիտական շրջանառության մեջ եղած աղբյուրներում պահպանված վերջին փաստն է։ Սակայն սխալ կլինի կարծել, թե 1280-ական թվականներից անմիջապես հետո Վահրամյանները հեռացան պատմության թատերաբեմից, իսկ նրանց իշխանությունը գադարեց գոյություն ունենալուց։ Անկասկած, Վահրամյանների ճյուղավորումների բաժանված շառավիղները XIII դ. վերջին—XIV դ. շրջանակում էին գոյատևել և Զաքարյան ավատական տան ավագ ճյուղերի ժառանգորդների նման իշխել իրենց մասնատված տիրույթներում, որոնք պարփակված էին Վահրամյանների երբեմնի հզոր ու լայնածավալ իշխանության լեռնային անմատույց շրջաններում։

КНЯЖЕСТВО ВАГРАМИДОВ ВО ВРЕМЕНА ВЛАДЫЧЕСТВА МОНГОЛОВ

АРТАШЕС ШАХНАЗАРЯН

Резюме

Княжество Ваграмидов, образовавшееся в конце XII—начале XIII вв. на значительной части территории областей исторической Армении: Колбопора, Тавуша, Гардмана, Парисоса и Шакашена, в 1235/1236 г. было завоевано монголами. Иноземное владычество имело пагубные последствия как для всей Армении, так и, в частности, для этого некогда процветавшего феодального княжества. Несмотря на то, что Ваграмидский князь Ваграм Гагеци играл видную роль в политической жизни страны, после его смерти (1250/1251) Ваграмидам не удалось сохранить прежние позиции. Начиная с конца XIII в. Ваграмиды постепенно сошли с исторической арены, а их земли, по всей вероятности, были раздроблены на мелкие владения.

92 Նույն տեղում, էջ 177։

93 Կիրակոս Գանձակեցի, էջ 348։

94 Ստեփանոս Օրբելյան, էջ 426։